2022 – 2023 ՈՒՍՏԱՐՈՒՄ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Պատմաաշխարհագրական առարկայական մեթոդական միավորման աշխատանքներն սկսվել են օգոստոսին, և աշխատանքների սկիզբը կարելի է համարել օգոստոսին կայացած մեթոդական միավորման առաջին նիստը: Նիստի ընթացքում առարկայական մեթոդական միավորման բոլոր անդամների մասնակցությամբ և առաջարկով կազմվել է առարկայական մեթոդմիավորման աշխատանքների պլան 2022-2023 ուստարվա համար:

Դեռևս նախորդ ուսումնական տարվա վերջում մեթոդական միավորումը դպրոցի մանկխորհրդին առաջարկել է ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչից դասաժամեր հատկացնել «Աշխարհագրություն», «Պատմություն» և «Հայրենագիտություն» (5-րդ դասարան) առարկաներին, որից 1-ական ժամ՝ աշխարհագրությանը 6-րդ և 7-րդ դասարաններում, 1 ժամ 5-րդ դասարանում՝ հայրենագիտությանը:

Այնուհետև կատարվել է վերջնական դասաբաշխում: Առարկայական մեթոդմիավորման բոլոր անդամները նշված ժամկետում կազմել են թեմատիկ պլաններ՝ դրանք համապատասխանեցնելով փոփոխված պետական ծրագրերին և չափորոշիչներին, այնուհետև ներկայացվել է տնօրինությանը՝ հաստատման:

Սեպտեմբերի 1-ին առարկայական մեթոդական միավորման բոլոր անդամները մասնակցել են «Գիտելիքի օրվա» տոնակատարությանը:

Սեպտեմբերի 21-ին մասնակցել են Անկախության օրվան նվիրված միջոցառմանը: Բոլոր դասարաններում անցկացվել են զրույցներ:

Սեպտեմբեր ամսին բոլոր դասարաններում անցկացվել են զրույցներ՝ նվիրված «Լեզուների միջազգային օր» թեմային, կատարվել են աշխարհագրական օտարալեզու անվանումների ստուգաբանություն և «Բաբելոնի աշտարակաշինությունը և մարդկանց լեզուների բաժանումը»:

Հոկտեմբերի 5-ին մեթոդական միավորման բոլոր անդամները մասնակցել են ուսուցչի տոնին նվիրված միջոցառմանը:

Հոկտեմբեր ամսին «Իմ Երևան» թեմայով 5-րդ դասարանները գրել են շարադրություն «Հայրենագիտության» դասաժամին:

Հոկտեմբեր ամսին «Թարգմանչաց» տոնի կապակցությամբ 7ա և 7բ դասարանները այցելել են Մատենադարան:

Հոկտեմբերի 15-ին «Հայրենագիտություն» առարկայից 5ա և 5բ դասարաններում անցկացվել է ճանաչողական բնույթի դաս՝ «Իմ հայրենիքի փոքր անկյունը» թեմայով:

Հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին իրականացվել է ներքին վերահսկողություն: Նոյեմբեր ամսին առարկայական օլիմպիադայի նախապատրաստական փուլն էր: Կազմվել են համապատասխան թեստեր «Հայոց պատմություն» առարկայից 8-րդ և 9-րդ դասարանների համար և ներկայացվել ուսումնական մաս: Նոյեմբեր ամսին անցկացվել են առարկայական օլիմպիադաներ՝ «Հայոց պատմություն» և «Հայ եկեղեցու պատմություն» առարկաներից: Մասնակցել են 8-րդ դասարանի աշակերտները: Բարձր միավորներ հավաքած աշակերտները երաշխավորվել են մասնակցելու տարածքային փուլին: «Աշխարհագրություն» առարկայից օլիմպիադան անցկացվել է ԳԹԿ-ի կողմից ստացված թեստերով, սակայն դպրոցի աշակերտները, հիվանդության պատճառով, չեն կարողացել մասնակցել:

Նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին «Հասարակագիտություն» առարկայից անցկացվել են զրույցներ տարբեր դասարաններում՝ «Հանդուրժողականության միջազգային օր» և «Մեր իրավունքները և պարտականությունները» թեմաներով:

Նոյեմբեր ամսին կատարվել է դասալսում և քննարկում 7ա դասարանում «Հայոց պատմություն» առարկայից՝ նվիրված հայ մեծ ուսուցիչ Մեսրոպ Մաշտոցին և նրա գործունեությանը (ուսուցիչ՝ Ք.Կարապետյան):

Դեկտեմբեր ամսվա վերջում պատմաաշխարհագրական մեթոդական միավորման բոլոր անդամները կատարել են կիսամյակային աշխատանքների ամփոփում:

Կիսամյակի ընթացքում մեթոդական միավորման ուսուցիչներն աշխատել են էլեկտրոնային մատյանում, ժամանակին կատարվել են թեմաների գրանցում, ընթացիկ գնահատում, թեմատիկ և գործնական աշխատանքները ժամանակին տրվել են, ստուգվել և անցկացվել էլեկտրոնային մատյանում:

Կիսամյակի ընթացքում աշխատանքներ են տարվել ներառական կրթության աշակերտների հետ, լրացվել են ԱՈՒՊ-ները և ճիշտ աշխատելու համար հաշվի են առնվել նրանց անհատական ընդունակությունները:

Ամբողջ կիսամյակի ընթացքում հետևել ենք թեմատիկ պլանների կատարողականին, թերացումներ չկան: Ամիսը մեկ անգամ հրավիրվել են մեթոդական միավորման նիստեր, որտեղ քննարկվել են օրակարգի հարցերը: Դեկտեմբեր ամսին մեթոդական միավորման նիստում ամփոփվել են առաջին կիսամյակի կատարած աշխատանքները: Ուսուցիչները աշխատում են թեմատիկ պլաններով, թերացումներ չկան:

Մեթոդական միավորման նախագահ Մարիամ Ղուկասյան